ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---------- 2026 թվականի № -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի N161-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №522-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ ԷՀՑ կանոններ) կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունները.

1) ԷՀՑ կանոնների 110-րդ և 111-րդ կետերում «2007 թվականի դեկտեմբերի 27-ի N1605-Ն որոշմամբ հաստատված էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի» բառերը փոխարինել «2023 թվականի ապրիլի 21-ի N568-Ն որոշմամբ հաստատված էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոնների» բառերով.

2) ԷՀՑ կանոնների 124-րդ կետում «2007 թվականի դեկտեմբերի 27-ի N1605-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգով սահմանված տեխնիկական սպասարկման, նորոգման

փորձարկման կարգով» բառերը փոխարինել «2023 թվականի ապրիլի 21-ի N568-Ն որոշմամբ հաստատված էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններով սահմանված պահանջներով» բառերով.

3) ԷՀՑ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 177.1-ին կետով.

«177.1. Համակարգի օպերատորը, յուրաքանչյուր տարի, մինչև դեկտեմբերի 1-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N568-Ն որոշմամբ հաստատված էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոնների պահանջների համաձայն, հաջորդ օրացուցային տարվա համար սահմանում է էլեկտրա-էներգետիկական համակարգի սահմանազատման կետերում հզորության գործակցի փոփոխման թույլատրելի տիրույթները և հրապարակում իր պաշտոնական կայքում:».

4) ԷՀՑ կանոնների 259-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«259. Հաշվառման համալիրներին, դրանց առանձին տարրերի հարաչափերին, հաշվիչների և չափիչ տրանսֆորմատորների ճշտությանը և ճշտության ստուգմանը, էլեկտրատեղակայանքների երկրորդային շղթաներին ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնի-կական կանոններին և կանոնակարգերին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան

---------- 2026թ.